ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 732

08 սեպտեմբեր 2025թ.

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«ԵՎՐՈՊԱ ՀԱՈՒԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել 2025 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը Ծաղկաձոր համայնք, Սարալանջի փողոց 12/1՝ 5,5 քմ ընդհանուր մակերեսով արտաքին գովազդը տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 733

08 սեպտեմբեր 2025թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.ԵՎՐՈՊԱ ՀԱՈՒԶ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ Ծաղկաձոր Սարալանջի թիվ 12/1 / տրամադրել՝

1) 2025 թվականի սեպտեմբերի 01-ից դեկտեմբերի 31-ը հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 259 քմ տարածքում,

2) 2025 թվականի սեպտեմբերի 01-ից դեկտեմբերի 31-ը ոգելից խմիչքների՝ 259 քմ, ծխախոտի՝ 43,1 քմ տարածքում վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 734

11 սեպտեմբեր 2025թ.

ՄԻՇԱ ԺՈՐԺԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, հիմք ընդունելով Միշա Ժորժիկի Խաչատրյանի դիմումը և «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հողամասի հատակագիծը, որի համաձայն մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, ք. Ծաղկաձոր, Եղիշե Չարենցի փողոց թիվ 59 հասցեում գտնվող, 07-005-0012-0001 կադաստրային ծածկագրով հողամասը սեփականաշնորհվել է 0.19 հա, որը Միշա Ժորժիկի Խաչատրյանին պատկանող հողամասն է, որը փաստացի կազմում է 0.20189 հա /ծածկագիր՝ 07-005-0012-0001/, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Միշա Ժորժիկի Խաչատրյանին տրամադրվող հողամասը և հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործվելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել Միշա Ժորժիկի Խաչատրյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, ք. Ծաղկաձոր, Եղիշե Չարենցի փողոց թիվ 59 հասցեում գտնվող, 07-005-0012-0001 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0.20189 հա մակերեսով /տրամադրված 0.19 հա/ բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասի և դրա վրա կառուցված 326.14 քառակուսի մետր բնակելի տան, 34.17 քառակուսի մետր ավտոտնակի, 11.2 քառակուսի մետր անասնաշենքի և 3.91 քառակուսի մետր կաթսայատան նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրա կողմից 1970-ական թվականներից մինչև այսօր:

2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 735

11 սեպտեմբեր 2025թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 11102023-07-0071) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք., Օրբելի եղբայրների փողոց, 19/3 հասցեում գտնվող 0.1154 հա ակերեսով հողամասի, (սեփականության վկայական N 15092023-07-0168) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք., Օրբելի եղբայրների փողոց, 21/7 հասցեում գտնվող 0.039 հա մակերեսով հողամասի և (սեփականության վկայական N 27082025-07-0043) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Ծաղկաձոր ք., Օրբելի եղբայրների փողոց, 19/7 հասցեում գտնվող 0.005 հա մակերեսով հողամասի միավորման հետևանքով առաջացած 0.1594 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների փողոց, 19/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 736

11 սեպտեմբեր 2025թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Անահիտ Պարգևի Ղազարյանին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2025 թվականի օգոստոսի 9-ին,ՀՀ, Կոտայքի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Աշոտ Հովհաննեսի Գինոսյանի կողմից, գրանցված գրանցամատյանում N 3216, ժառանգական գործ N 179), 0.236 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Մեղրաձոր, 11-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 737

11 սեպտեմբեր 2025թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 08-ին հաստատված «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք -5 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի կազմում ներառված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերը հաստատելու մասին» թիվ 127-Ն որոշումը, Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի պահանջները,ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2025 թվականի հունիսի 10-ին տրված՝ թիվ ԱՏ-10062025-07-0040 տեղեկանքը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը չի առնչվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին և հիմք ընդունելով Հարություն Լիպարիտի Տոնոյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաշվի առնելով Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի պահանջները՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գյուղ Մարմարիկ 12-րդ փողոց 1 հասցեում գտնվող, Հարություն Լիպարիտի Տոնոյանին սեփականության իրավունքով պատկանող, 07-044-0132-0034 կադաստրային ծածկագրով, 0,10475 հա մակերեսով հողամասից 0,06463 հա մակերեսով հատվածի նպատակային և գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական, արոտավայրից փոփոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման համար նախատեսված հողերի:
2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 13042022-07-0040 սեփականության վկայականում 0.023 հա մակերեսով հողամասը արդեն իսկ բնակավայրերի հասարակական նշանակության է, հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխումից առաջացած կադաստրային արժեքի տարբերությունը կազմում է 776 379 (յոթ հարյուր յոթանասունվեց երեք հարյուր յոթանասունիններ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125007337 հաշվեհամարին:
3.Սույն փոփոխությունը կատարել նաև Ծաղկաձոր համայնքի կադաստրային քարտեզում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 738

12 սեպտեմբեր 2025թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Գևորգ Ռաֆիկի Գալստյանին ըստ անշարժ գույքի /հողամասի/ առուվաճառքի պայմանագրի պատկանող (անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր՝ տրված 2025 թվականի օգոստոսի 20-ին, ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար՝ Աիդա Աբրահամյանի կողմից ,գրանցված է սեղանամատյանում N 5957) 0,221 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Հանքավան, 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 14/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 739

12 սեպտեմբեր 2025թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Յուրա Գալստյանին,Աղվանիկ Գալստյանին,Սուրեն Գալստյանին և Սմբատ Գալստյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 31052016-07-0036) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գյուղ Աղավնաձոր, 3-րդ փողոց, 9 հասցեում գտնվող 0.235 հա մակերեսով հողամասի բաժանման հետևանքով առաջացած (ըստ բաժանման հատակագծի) 0,0827 հա մակերեսով հողամասին (առանձնացվող հատված 1) տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, 3-րդ փողոց, 9/2 հողամաս, իսկ մնացած 0.1523 հա մակերեսով հողամասին (առանձնացվող հատված 2) հասցեն՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, 3-րդ փողոց, 9/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 740

15 սեպտեմբեր 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N15-Ն հրամանը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2025 թվականի հոկտեմբերի 23-ին ժամը 11:00-ին անցկացնել Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող հետևյալ համայնքային ծառայողների ատեստավորում՝
1) Աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1) Գարիկ Աշոտի Բաղալյան
2) Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ (ծածկագիր 2.1-2) Նարինե Լևիկի Խաչատրյան.
3) Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ (ծածկագիր 2.1-3) Արմեն Ալբերտի Արշակյան.
4) Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժն ի պետ՝ Արա Սերյոժայի Մեսրոպյան (ծածկագիր 2.1-1)
2. Ատեստավորման հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկման, նախապատրաստական աշխատանքների իրականացման լիազորությունները վերապահել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանին:
3. Սույն որոշում նուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 741

15 սեպտեմբեր 2025թ.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ԱՐՏԵՄ ՎՐԵԺԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 1038 ՈՐՈՇՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Արտեմ Վրեժի Խուդավերդյանի դիմումը և Ծաղկաձոր համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի N 5 արձանագրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել հոգաբարձու Արտեմ Վրեժի Խուդավերդյանին գրավադրել իր խնամարկյալ, անչափահաս Արեն Արտյոմի Խուդավերդյանին (ծնված՝ 2010 թվականի հունվարի 13-ին) 1/3 մասնաբաժնով սեփականության իրավունքով պատկանող, ք. Երևան, Նոր Նորք, 9-րդ միկրոշրջան 24 շենք, 28 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը (սեփականության վկայական N04102024-01-0333, կադաստրային ծածկագիր 01-008-0304-0313-001-028):

2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 09-ի «Հոգաբարձու Արտեմ Վրեժի Խուդավերդյանին ավտոտնակի օտարման թույլտվություն տալու մասին» N 1038 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 742

16 սեպտեմբեր 2025թ.

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«ԷԳԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2025 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում Ծաղկաձոր համայնք, Սարալանջ, Տանձաղբյուր, Խաչատուր Կեչառեցու փողոցներում ՝ 44 քմ ընդհանուր մակերեսով այլ արտաքին գովազդ, 180 քմ սոցիալական գովազդ տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 743

16 սեպտեմբեր 2025թ.

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«ՌԵԶՈՐԹ ՄԵԴԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Ծաղկաձոր համայնք, Սարալանջի, Տանձաղբյուրի, Խաչատուր Կեչառեցու, Եղիշե Չարենցի, Միհեր Մկրտչյանի, Օրբելի Եղբայրների,Վլադիմիր Հարությունյանի, Գրիգոր Մագիստրոսի փողոցներում 2025 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում 187 քմ ընդհանուր մակերեսով այլ արտաքին գովազդ, ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանքի արտաքին գովազդ 12 քմ, սեփական գովազդ 49 քմ, դատարկ վահանակներ 153,5 քմ, սոցիալական գովազդ 30,5 քմ տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 744

16 սեպտեմբեր 2025թ.

ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ջանետա Լեվանի Գևորգյանին,Սուրեն Սողոմոնի Մախսուդյանին,Լուսինե Մախսուդյանին և Թեմուր Մախսուդյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 0090673 տրված 06 դեկտեմբերի 1999թ), 77,80 քմ մակերեսով բնակարանին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Խ. Մուրադյան փողոց, 5 շենք, 15 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ